



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

----- 2018 թվականի №---Ա
քաղ. Երևան

**«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԻՐ ՏՈՒՅԺ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ դժբախտ պատահարների, արտակարգ իրավիճակների կամ կյանքի ու ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների դեպքում օպերատորները պարտավոր են ապահովել հնարավոր ամենաարագ հաղորդակցությունը.

բ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012 թվականի հունիսի 13-ի N210Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝ հատուկ ծառայությունների կամ ծառայության «1xx» կոդերի զբաղեցման կանոնների 5-րդ կետի համաձայն՝ արտակարգ իրավիճակներում կամ մարդու կյանքի, առողջության, գույքի կամ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներից պաշտպանության ապահովման օպերատիվ արձագանքման նպատակով կողը գործարկվում է «ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից.

գ) Հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի N341Ն որոշմամբ տրամադրված N60 լիցենզիայի պայմանների 5.10-րդ, 5.25-րդ և 5.26-րդ կետերի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ապահովել իր կողմից շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի հուսալիությունն ու անվտանգությունը, հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել լիցենզիայի պայմանների խախտման, ինչպես նաև Հանձնաժողովի ընդունած կանոնակարգերին համապատասխան մատուցել կարճ կողով հատուկ հաղորդակցության

ծառայությունները, ինչպիսիք են արտակարգ իրավիճակների ծառայությունները (հրշեջ ծառայություն, ոստիկանություն և շտապ բուժօգնություն) և այլ ծառայություններ, որոնք կարող են պահանջվել Հայաստանի Հանրապետության կառավարության, զինված ուժերի և օդանավակայանային իշխանությունների կողմից.

դ) Հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 8-ի NУԲ-003Հ գրությամբ պահանջվել էր ներկայացնել պարզաբանումներ 2018 թվականի հունվարի 1-4-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության հանրային ամրակցված կապի հեռախոսացանցում առկա խափանումների պատճառների, դրանց վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին, ինչպես նաև առաջարկություններ՝ հետագայում նման իրավիճակները բացառելու ուղղությամբ.

ե) Ընկերության 2018 թվականի հունվարի 12-ի N001/18-Մ11 գրությամբ ներկայացված պարզաբանումների համաձայն՝ միջադեպ է տեղի ունեցել ամրակցված կապի հանգույցներից մեկում, որի միջոցով կազմակերպվում է այլ օպերատորների միացումը 911/112 հանգույցին, իսկ պահուստային կապուղիներն այդ պահին աշխատունակ են եղել: Միաժամանակ, գրության համաձայն՝ միջադեպի վերացման նպատակով ներգրավված տեխնիկական աջակցության ծառայություններ մատուցող ընկերության սխալ վերլուծության և գործողությունների արդյունքում այլ օպերատորների, Ընկերության ամրակցված ցանցի աննշան մասի և բջջային ցանցի մի մասի բաժանորդները չեն կարողացել զանգեր իրականացնել 112 և 911 համարներին, և նշված իրավիճակի վերլուծության արդյունքում Ընկերությունը որոշում է կայացրել խզել պայմանագիրը տեխնիկական աջակցության ծառայություններ մատուցող ընկերության հետ՝ տեխնիկական աջակցումը փոխանցելով այլ ընկերության.

զ) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության 2018 թվականի փետրվարի 23-ի N2/4-222 գրության համաձայն՝ Ընկերության ամրակցված ցանցի խափանումների հետևանքով մոտ 34 ժամ հանրապետության կապի բաժանորդներին հասանելի չեն եղել դեպի հատուկ ծառայությունների կոդեր, այդ թվում՝ 911, 112, 102 և 103 համարներին կատարվող զանգերը: Ընդ որում, Ընկերության պահուստային համարվող TES 1 կայանին անցում կատարելու համար անհրաժեշտ տևողությունը կազմում է 48 ժամ, իսկ առաջացած խափանումներից հնարավոր էր խուսափել, եթե հանգույցները կառավարող ընդամենը մեկ TES 2 կայանին զուգահեռ միացված լինեին նշված կայանի գործառույթներին անմիջապես փոխարինող պահուստային հանգույցներ և սարքավորումներ.

ե) Հանձնաժողովի 2018 թվականի մարտի 13-ի NՌՆ-491Հ գրության համաձայն՝ Ընկերությունից պահանջվել էր իրականացնել համակողմանի և խորը վերլուծություն և ներկայացնել պարզաբանումներ Ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցում տեղի ունեցած խափանումներն առաջացրած գործոնների, ինչպես նաև TES-2 կայանն առանց զուգահեռ միացում ունեցող փոխարինող պահուստային հանգույցների գործելու պարագայում Ընկերության կողմից Օրենքով և լիցենզիայով ամրագրված պահանջների կատարման ապահովման վերաբերյալ:

ը) Ընկերության 2018 թվականի մարտի 27-ի N075/18-Մ11 գրությամբ ներկայացվել են Ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցում տեղի ունեցած խափանումներին հաջորդող գործողությունների իրականացման ժամանակագրությունը, վթարի ծառայողական քննության փաստաթղթերի պատճենը, կապի կազմակերպման սխեման, պահուստների նկարագիրը, աշխատակիցների պաշտոնական հրահանգներն ու հավաստագրերը և պարզաբանումներ, որոնց համաձայն՝ վթարի հիմնական և կարևոր պատճառ է հանդիսացել մարդկային գործոնը և տեխնիկական աջակցության ծառայություններ մատուցող «Պենտա» ընկերության մասնագետն իր սխալ վերլուծությամբ և գործողություններով շարքից հանել է ցանցի աշխատունակության համար պատասխանատու համակարգեր:

Միաժամանակ, Ընկերության կողմից ներկայացված՝ ֆիքսված կապի ցանցի վթարի պատճառների ուսումնասիրության արդյունքի համաձայն՝ ֆիքսված կապի ցանցի խորը աջակցություն իրականացնող գործընկեր «Պենտա» ընկերությունը փաստացի փոխարինվել է, իրականացվել է արտակարգ ծառայությունների աշխատանքի պահուստավորման այլընտրանքային սխեմա «ԶԻԷՆՄԻ-Ալֆա» փակ բաժնետրիական ընկերության ներգրավմամբ և տեխնիկական բլոկի ներսում կատարվել է կազմակերպչական աշխատանք՝ վթարի ժամանակ և դրա վերացման ընթացքում ձեռք բերված փորձի գրանցման համար:

թ) Հանձնաժողովը 2018 թվականի ապրիլի 16-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 9-րդ կետի և Հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի N341Ն որոշմամբ Ընկերությանը տրամադրված լիցենզիայի 5.10-րդ, 5.25-րդ և 5.26-րդ կետերի պահանջների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 16-ի NԱԲ-772Հ գրությամբ:

ժ) հարուցված վարչական վարույթի շրջանակում 2018 թվականի ապրիլի 27-ի N101/18-Ո11 գրությամբ Ընկերությունը ներկայացրել է իր պարզաբանումները՝ հայտնելով, որ TES-2 կայանի TGC և MGW հանգույցների մոդուլների անսարքության պատճառ է հանդիսացել հիմնական պլատայի մեկ մոդուլի անսարքությունը MGW հանգույցում, և տեխնիկական աջակցություն իրականացնող ընկերության կողմից իրականացված սխալ գործողություններից հետո շարքից դուրս են եկել TGC հանգույցի մոդուլները: Բացի այդ, մինչև TES-1 կայանից TES-2 կայան վերագործարկումը TES-2 համակցման կենտրոնը աշխատել է «սառը ռեժիմով»՝ համաձայն համակցման սխեմայի: Իրականում TES-1 կայանից TES-2 կայան վերագործարկումը իրականացվել է մոտավորապես 48 ժամում, վենդորի տեխնիկական աջակցման ներկայացուցիչների հետ համատեղ գործողություններով: 2015 թվականին, վերագործարկումից հետո, TES-1 համակցման հանգույցը անցել է «սառը ռեժիմի» և մինչ օրս գտնվում է գործող վիճակում: Կայանի աշխատունակությունը վերականգնվել է TES-1 կայանի աշխատունակ մոդուլներով TES-2 կայանի անսարք մոդուլների փոխարինմամբ:

Ժա) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 9-րդ ենթակետով և Հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի N341Ն որոշմամբ Ընկերությանը տրամադրված լիցենզիայի պայմանների 5.10-րդ, 5.25-րդ և 5.26-րդ կետերով սահմանված պահանջները: Ինչ վերաբերում է Ընկերության ներկայացրած պարզաբանումներին, ապա անկախ այն հանգամանքից, թե նշված պարտավորությունների փաստացի ապահովումն իրականացվում է Ընկերության կողմից ինքնուրույն, թե տեխնիկական աջակցության ծառայություններ մատուցող այլ անձի միջոցով, նշված պարտավորությունների կատարման պատասխանատուն Ընկերությունն է: Այդուհանդերձ, վերջինս միջոցներ է ձեռնարկել խախտման պատճառների վերացման և հետագայում նման դեպքերի բացառման ուղղությամբ, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժբ» ենթակետը, 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 16-րդ ենթակետը, 63-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Օրենքի 54-րդ հոդվածի և Հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի N341Ն որոշմամբ տրամադրված լիցենզիայի պայմանների պահանջների խախտման

համար Ընկերությանը ենթարկել տույժի՝ 2 000 000 (երկու միլիոն) դրամ գումարի չափով:

2. Ընկերությանը՝

- 1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 9-րդ ենթակետի և Հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի N341Ն որոշմամբ Ընկերությանը տրամադրված լիցենզիայի պայմանների 5.10-րդ կետի պահանջների կատարումն ապահովող հիմնավորումներ՝ տեխնիկական ներքին աուդիտի իրականացմամբ.
 - 2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված գումարը 900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
 - 3) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
-- ----- 2018թ.